ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 396

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքը (Աշնակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Թալին համայնքի (Աշնակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1.Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքը (Աշնակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-011-0128-0003 կադաստրային ծածկագրով 15.0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	02-011-0128-0003 կադաստրային ծածկագրով 15.0 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների էներգետիկայի հողեր

2.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3.Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված պահանջները (կցվում են):

4.ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աշնակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Աշնակ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ. Առաքելյան

Երևան, « 9 » «դեկտեմբերի» 2025 թ.